վ. Թորոս գովէր զվարդն ու զվըլկուլն,
որ ի սերուն զամ կու քաշին.
Զինչ հողածին կայր արարածս,
որ չէր դիպեր այն պալային[7]:

=Ձեռագիրք՝ Երուսաղէմ Թ. 3052: Բերլին 84, 127բ—130ա (ԺԷ): W. 398, 22բ—24բ:

Հրա. Քիւրտեան, 42—44: Հայերգ 116—118:

3. Տաղ ի վերայ հողւոյ ասացեալ:

Ի մէջ մեղաց եմք մոլորեր,
յաստընվորիս կու գործեմք չար.
Այլվի զԱստուած բարկացուցաք,
որ սըրտին եկեր դիժար...
վ. Զայնչափ չարիքդ որ կու նայիս
գիրի Թորոս մըտօքդ յիմար.
Գընա լալով խոստովանեց,
լեզուով արէ զմեղքդ ի խրատ:

=Ձեռագիրք. K. 2. 71բ—72ա. Մատենան, էջ 212—215:

Հրա. Քիւրտեան, 22—23:

4. Պատմութիւն վասն ԺԲ Հողմից. զոր ասեմք ի սակաւ մտացս զոր լուաք փոքր ի չատէ առաուածային գրոցն, որ ելանեն ի չորրորդ հրեշտակաց. վասն երդողացն ասացաւ ի Թորոսէ:

Ի յետ ստեղծմանն արարածոց,
որ գոյացոյց զայս ամենայն,
Օդոց եռուր իշխանութիւն
հողմ ու քամու արար սահման...
վ. Թորոս պատմէ զազնիւ հողմունքդ,
որ են թըւով երկոտասան...
ով որ քամուն յիշոցք ասէ,
նա զ(երդ) կայէն եղբայրսպան:

Խորագիրն K. ունի «Պատմութիւն ԺԲ հողմոց, ասացեալ ի Թորոսէ:

=Ձեռագիրք՝ K. 1. 52ա—54ա: E. 395, 34ա: էջմ. 1636, 145ա (ԺԸ):

Հրա. Քիւրտեան, 35—39:

5. Ոտանաւոր վասն դատաստանին աւուրն հատուցման, չարեացն զչար եւ բարեգործացն՝ զբարիքն, որ վկայէ սուրբ Աւետարանն. արարեալ ի Թորոսէ[8]:

Յորժամ տարերքքն զդղրդին,
երկինք 'ւ երկիր խոնարհանան,
Եւ կատարին կեանք եղելոց,
որ արարածքս հիանան...
վ. Թորոս յիշէ զօրն ահագին,
երբ ժողովին ի դատաստան,
Ի յայնմ ահեղ հրապարակին,
ո՞ւր է լեզու կամ պատասխան:

=K 1, 41բ—48ա: E. 395, 57ա—62ա: W. 988, 178ա—182ա (սկիզբէն չորս տուն պակաս):

Հրա. Քիւրտեան, 27—35:

6. Տաղ երկու ազգ լեզուէ ի Թորոս Մշեցւոյ ասացեալ:

Է եէրի կօկի քարատան,
եէրի կօկտան քարատան,
Զհողն ի ջրոյն բաժանեցեր
եւ ի վերայ ջուրցըն նըստար.
է սան մի սան քարիմ ռահիմ,
եէտու կօկա այեան պահար...
վ. Գերի Թորոս մըտօք մոլար,
մեղօք դարձեր ես կունահքար
Կէճա կունտուղ զաֆիլ օրմա.
աչ կօղընկի հախայ եալ վար:

Խորագիրը W. 344 ունի «Ի Թորոսէ Տարօնեցւոյ ասացեալ է»: E. Երուսաղէմ 3057 տաղ ի Թորոսէ Մըշեցոյ ասացեալ: Անտ. 125 «տաղ երկու ազգ լեզուէ»:

=Երուսաղէմ 3057: E. 395, 52ա-բ: Զմմառ, Անտ. 125, 144բ (ԺԷ): Շաւարշ վ. Սահակեան 1. էջ 162—164 (1624): W. 344, 38ա: 671, 15ա (սկիզբէն մէկ տող պակաս խորագրին հետ):

Հրա. Քիւրտեան, 45—46: Բազմավէպ 1910, էջ 281 (առաջին 10 տողերը. ընծայուած Թաթոս Թորոսթեցւոյ, հմմտ. Հանդ. Ամս. 1910, էջ 285):

7. Վասն կատարածի աւուրն զոր Զերբոնիմոս եղիա ի Պատմութեանցն Հրէից. ԺԸ. նշան որ լինելոցն է զկնի պիղծ Նեռին:

Բեղ ծանուցից, եղբայր, լըսէ,
որ լինելոց է յետ Նեռան.
Նախ քան զգալուստն Քրիստոսի,
որ կայ փառօք ի դատաստան,
վ. Այս փոփոխումն է որ յայտնի,
երկինք 'ւ երկիր նոր կերպարան,
Որ կանցելոցըն ցուցանէ,
յայտնէ զայժմոյս եւ զապագայն:

Խորագրին մէջ K. 1 չունի «զոր Զերբոնիմոս եղիա ի պատմութեանցն Հրէից. ունի W:

[7] W վերջին տողն ունի մեղքն թոյլատրեալ է Թորոսին եւ լըսողացդ ամենին:
[8] Խորագիրն՝ E. ի Թորոս Մշոյ ասացեալ է:

=K 1, 48ա—50ա: W. 988, 182ա—183բ (1706):

Հրա. Քիւրտեան, 39—41:

Երկու ձեռագիրներու մէջ ալ անանուն, Wի մէջ կը յաջորդէ Թորոսի «Յորժամ տարերքքն դղրդին» տաղին: Ճիշդ նկատած է Յ. Քիւրտեան, թէ «վստահօրէն իրն է նաեւ այս տաղը, որ ոչ միայն նոյն ոճը ունի, այլ եւ մեր այս ձեռագրին մէջ պետեղուած է Թորոսի տաղերուն մէջ» (անդ 39):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ՝ ՁԵՌԱԳՐԱՑ Ի ԲՈՒԼԳԱՐԻԱ

ՎԵՑՀԱԶԱՐԵԱԿ ՓՈՔՐԻԿ Ի ՊԼՈՎԴԻՒ

ԹՈՒՂԹՔ՝ 14½ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22¼×16 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւրը՝ 17×5 սմ. առնուած կարմիր շրջագծերու մէջ: — ՏՈՂՔ՝ 26—27: — ՆԻՒԹ՝ թուղթ պինդ եւ ողորկ: — ԿԱԶՄ՝ կարուած՝ տետրակի ձեւով: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿՔ՝ չունի. սկիզբն ու վերջը մէկական պարապ թուղթ՝ որպէս պահպանակ եւ կողք: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ նոտրագիր, մանր ու գեղեցիկ, սեւ մելանով: Սկզբնագիրք՝ կարմիր մելանով: — ԴԱՏԱՐԿ՝ թղ. 4, 7ա, 8բ, 9—14: — ՆԿԱՐՔ՝ չունի: Ունի արեգակնացոյց սիրուն շրջանակ մը՝ գծուած (թղ. 6ա): — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չունի: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1825: — ԳՐԻՉ՝ Պետրոս դպիր Տէրեա Ստեփանեան Ադրիանուպոլսեցի: — ՏԵՂԻ՝ Ֆիլիպէ (Պլովդիւ): — ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ՝ թղ. 1ա: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ անձնականիս. ստացած եմ վերջերս նուէր՝ Պլովդիւի Տ. Վաղինակ Ա. քհ. Տէր Մինասեանէ:

Մատեանս է՝ «Տետրակ որ կոչի՝ վեցհազարական: Եւ ըստ Հոլովաց արեգական». *անաւարտ: Կը բովանդակէ.*

Թղ. 1բ. «*Այլք խրատք ըստ Հոլովաց արեգ. ո՛վ պատուական եղբայր գիտացիր զի արեգակն բարձրանայ յայրէն մինչեւ ցըքէն, եւ խոնարհի ի քէյէն մինչեւ ցայրն. զի յորժամ բարձրանալ սկսանի յամէն օր հոլով մի բարձրանայ, եւ քն աստման եւ զ ասպարէզ...*»:

Թղ. 2ա—3բ. *Արեգակնացոյց աղիւսակք. Խոյ, Ցուլ, Եկաւոր, Խեցգետին, Առիւծ եւն եւն. Մարտէն մինչեւ փետրամիսներ...:*

Թղ. 5ա. «*Այրէն մուտ արա՛ չուրջն՝ այրուրէն քէն լզ գիրն եւ են այսոքիկ, է ձայնաւորաց ամէն...*»:

Քերականութիւնս որ կոչի՝ է գրեանք գուզեալ ի Դաւիթ անաղթ փիլիսոփայէ, եւ ի Հոսմ վարդապետէ որ կոչի անուն Փընիկ: ա, ե, է, ը, ի, ո, ւ. եւ են այսոքիկ զողին այսպէս բանս զմիտս...»:

Թղ. 6բ. «*...Այս արուեստքս զո (=6000) եակին է զոր գովեց Անանիա չիրիկուանցին եւ ասաց զանձ թաղուցեալ է ի տունն Թորգոմայ զի մայր է սա ամենայն իմաստութեան՝ այս է թուոց աղբիւրն ամենայն իմաստութեան հանդերձ ամենայն արանամամբ (այսպէս), եւ զի տեսին զսա ճարտարքն յունաց ի մերում...* (անաւարտ ձգուած):

Թղ. 7բ—8ա. *այրուբենական աղիւսակք:*

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ: Թղ. 1ա «Տետրակ որ կոչի՝ վեցհազարական, եւ ըստ Հոլովաց արեգական: Զեռամբ Անդրիանուպոլսեցւոյ Հանգուցեալ Տէրեա Ստեփանեան վրժոյ իրք արցւ. Պետրոսին: 1825, 11/25, ի Ֆիլիպէ»:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ: Ձեռագրիս գրիչ Պետրոս դպիր Տէրեա Ստեփանեան Ա. Պոլսեցի գրած է ի Պլովդիւ նաեւ «Մտորագրութիւն Ս. Գէորգ Եկեղեցւոյ»՝ 1828ին՝ (տես «Յուցակ»ին Թ. 12 ձեռագիրը, Հանդ. Ամս. 1938, էջ 211—214), եւ իւրաքերից Աւետարան՝ 1834ին՝ (տես՝ անդ, Թ. 22 ձեռագիրը, Հանդ. Ամս. 1940, էջ 245—246):

ՆԵՐՍԷՍ ԳԱՍԱՊԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ՀՈՒՆՁՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆՔԻ ԳԱՐԵՑԻ ՎՐԱՅ

1938—1946

Յաւով կը նշանակենք անունները այն հայագէտներու եւ արեւելագէտներու, որոնք վախճանեցան յընթացս վերջին 8 տարիներու: Զենք առներ ցանկիս մէջ այն հանգուցեալները, որոնց մասին անկատար են տակաւին մեր տեղեկութիւնները:

Richard Vasmer, *մասնագէտ իսլամական դրամագիտութեան: Ծն. 22 հոկտ. 1888, Պետերբուրգ. † 21 փետրուար 1938, կենդրոնական Ասիա:*

Իր աշխատութիւնն է. «Հայաստանի ոսկիներու ժամանակագրութիւնը 833—

© National Library of Armenia

887 տարիներու չրջանին». տպագրուած նախ «Հանդ. Ամս.» մէջ եւ ապա առանձին հատորներով գերմաներէն եւ հայերէն (Վիեննա, 1933):

Frédéric Macler, ուսուցչապետ հայերէն լեզուի Պարիսի Արեւելեան կենդանի Լեզուներու Դպրոցին մէջ: Ծն. 1869. Պարիս. † 13 յուլիս 1938, Պարիս:

Ունի բազմաթիւ աշխատութիւններ հայ Պատմութեան, Գրականութեան եւ Գեղարուեստի մասին:

Թորգոմ Արքեպ. Գուշակեան, Պատրիարք Հայոց Երուսաղէմի: Ծն. 14 սեպտ. 1874, Պարտիզակ. † 10 փետր. 1939, Երուսաղէմ:

Իր գրչէն լոյս տեսաւ Հանդ. Ամս.ի մէջ Սեբաստիոյ Ս. Նշանի վանքի ձեռագիրներու ցուցակը:

Սահակ Բ. Խապայեան, Կաթողիկոս Սսոյ: Ծն. 25 մարտ 1849, Խարբերդ. † 8 նոյեմբեր 1939, Անթիլիաս (Բէյրութ):

Տուած է Բանասիրական մանր աշխատանքներ. կազմած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի ձեռագիրներու ցուցակը (դժբախտաբար անտիպ մնացած):

William Mitchell Ramsay, ուսուցչապետ Aberdeenի Համալսարանին, պատմագիր եւ հնախօս: Ծն. 15 մարտ 1851, Glasgow. † 20 ապրիլ 1939:

Ունի բազմաթիւ աշխատանքներ Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ պատմութեան, հնախօսութեան եւ աշխարհագրութեան հայոց:

Karl Roth, ուսմանց խորհրդական եւ ուսուցիչ: Ծն. 1866. † 12 յունուար 1940 Միւնխէն:

Տուած է մանր աշխատանքներ Հայոց պատմութեան մասին. պատրաստած էր ընդարձակ Հայոց պատմութիւն մը (անտիպ):

Հ. Յովհաննէս Թորոսեան, Անդամ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան: Ծն. 28 յունուար 1860, Պարտիզակ. † 8 յուլիս 1940, Ազոլոյ (Վենետիկ):

Ունի աշխատութիւններ հայ հին գրականութեան վերաբերեալ. գրած է Երանաշնորհ Մխիթարի վարքը:

Eduard Schwarz, ուսուցչապետ Մինխէնի Համալսարանի Դասական Բանասիրութեան: Ծն. 22 օգոստոս 1858, Կիլ, † 13 փետրուար 1940, Միւնխէն:

Հրատարակած է բազմագան գործեր դասական գրականութեան եւ քրիստոնէական առաջին չորս դարերու հայոց: Նկատի առած է տեղ տեղ նաեւ հայկական աղբիւրները:

David Samuel Margoliouth, ուսուցչապետ արաբերէն լեզուի Օքսֆորդի Համալսարանին մէջ: Ծն. 17 հոկտ. 1858. Լոնտոն. † 22 մարտ 1940, Լոնտոն:

Ունի 2 մանր աշխատասիրութիւն Հայոց լեզուի եւ պատմութեան հայոց:

Josef Strzygowski, ուսուցչապետ Գեղարուեստի պատմութեան ի Վիեննա: Ծն. 7 մարտ 1862 ի Բիէլից. † 2 յունուար 1941, Վիեննա:

Հեղինակ բազմաթիւ ստուար հատորներու, նուիրուած գեղարուեստի պատմութեան. որոնց մէջ լայն չափով նկատի առնուած է նաեւ հայ արուեստը: Նշանաւոր է իր «Հայկական շինարուեստն եւ Եւրոպա»:

Արիստակէս Վ. Վարդանեան, նախկին անդամ Վիեննայի Մխիթ. Միաբանութեան: Ծն. 23 մարտ 1887, Կուտինա (Քէօթահիա). † 25 դեկտ. 1941. Պարիս:

Ունի բանասիրական-մատենագրական աշխատութիւններ, որոնք լոյս տեսած են Հանդէս Ամսօրեայի մէջ:

Նիկողայոս Ադոնց, ուսուցչապետ հայերէնի Բրիւքսէլի Համալսարանի մէջ: Ծն. 23 յունուար 1875, Զանգեզուր. † 27 յունուար 1942 Բրիւքսէլ:

Ունի բազմագան աշխատութիւններ հայ-բիւզանդական պատմութեան շուրջ: Իր գլխաւոր աշխատութիւններն եղան Հայաստան Յուստինոս Ա.ի օրով. եւ Դիոնեսիոս Թրակացւոյ Քերականութիւնը:

Վահրամ Թորգոմեան, բժիշկ: Ծնած 20 ապրիլ 1858, Սկիւտար. † 20 ապրիլ 1942, Պարիս:

Երկար ժամանակ աշխատակցած է Հանդ. Ամս.ի Հայ Բժշկութեան պատմութեան եւ Կ. Պոլսոյ հայ գաղութի պատմութեան հայոց յօդուածներով:

Կարապետ Բասմաջեան. գեղագործ: Ծն. 1864, Կ. Պոլիս. † 17 մայիս 1942, Պարիս: Հրատարակած է «Բանասէր» հանդէսը. գրած է պատմական աշխատութիւնն Լեւոն Զ. Լուսինեան, տուած է բազմաթիւ պատմական-բանասիրական մանր յօդուածներ գանգան հայ եւ օտար թերթերու: Լոյս ընծայած է Ամիրտովլաթի «Անդիտաց անպետը»:

Augustin Merk, Յիսուսեան Ընկերութենէ. ուսուցչապետ Նոր Կտակարանի Մեկնութեան Հռոմի Ս. Գրոց Քահանայապետական Ինստիտուտի մէջ: Ծն. 11 սեպտ. 1869, Ախեն. † 3 ապրիլ 1945, Հռոմ: Ունի բազմաթիւ մանր աշխատանքներ Նոր Կտակարանի հայերէն թարգմանութեան եւ յարակից խնդիրներու շուրջ:

Hans Lewy, ուսուցչապետ դասական գրականութեան Երուսաղէմի Համալսարանին մէջ: Ծն. 21 մարտ 1901, Բերլին. † 22 յուլիս 1945 Երուսաղէմ:

Հայերէնագէտ: Հրատարակած է Փիլոնի «Յաղագս Յոփեանու»: Ունի հմտալից աշխատանքներ հելլենական փիլիսոփայութեան եւ յարակից խնդիրներու մասին:

Resumé.

P. N. Akinian: **Die dem hl. Sahak zugeschriebenen kirchlichen Verordnungen.** (Ein literarisch-historischer Beitrag.) H. A. 60 (1946), Sp. 48—70, 61 (1947), 1—25.

In der armenischen Kanonensammlung des Katholikos Johann III. (717—728) befinden sich fünf Kapitel von kirchlichen Verordnungen, als deren Autor Sahak I. (368—439) angegeben wird. An der Autorschaft Sahaks konnte Johann III. nicht zweifeln, da bereits vorher der Katholikos Sahak III. (677—703) dieselbe für echt gehalten hatte. In dieser Überzeugung verharrten die folgenden Jahrhunderte. Erst im 19. Jahrhundert hatten manche Gelehrte gegen diese Auffassung Bedenken. So z. B. A. Mai, F. Conybeare, J. Gatherdjian, J. Dashian. Insbesondere J. Gatherdjian befaßte sich mit dieser Frage: Sie sind pseudonym, verfaßt im Laufe des 6. Jahrhunderts.

Nun unterzieht A. diese Schriften einer näheren Untersuchung, deren Resultate lauten: Die Kap. 1, 2, 4 und 5 sollen aus inneren Gründen eher als Pastoralbriefe als für kanonische Verordnungen angesehen werden. Der Verfasser steht unter dem Einflusse der klassischen Literatur des 5. Jahrhunderts. Er hat die Satzungen der Dwiner Synode vom Jahre 554 sowie den kanonischen Brief Maka rius II. von Jerusalem, geschrieben um 560, gekannt. Die Abfassungszeit fällt in den Anfang des 7. Jahrhunderts. Kap. 3 ist als eine Synodalschrift zu betrachten, wahrscheinlich erlassen in der Dwiner Synode vom J. c. 605, betreffs des Weltklerus. Alle fünf Kapitel stammen aus einer Feder, die aller Wahrscheinlichkeit nach dem Wardapet Wrthanes, genannt K'ert'oł, angehört.

Als 6. Kapitel hat ein Teil des 4. Kapitels und der Zusatz zu gelten, welchen Johann III. als eine Überlieferung des hl. Gregor des Erleuchters seiner Sammlung angehängt hat. Es werden darin die Gaben und Abgaben bestimmt, die an verschiedenen Feiertagen zugunsten der Klöster oder der Weltpriester gegeben wurden. Es ist um 625 verfaßt. Die beweglichen und unbeweglichen Festtage des armenischen Kirchenjahres, die in diesem Kapitel erwähnt sind, verspricht der Verfasser in einem besonderen Beitrag zu behandeln.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ուղարկուած խմբագրութենէս:)

Աղաեանեան Գրիգոր Պետրոս ԺԵ., *կարդինալ, Թուղթ հովուական: Պէյրութ* 1946, 8⁰ *մեծ*, *էջ* 12: [1

Առաքելեան Ներսէս Եպ., *Անհրաժեշտ, Ա.: Պուքրէշ, տպ. Ասթօրիա*, 1940, 8⁰, *էջ* 52: [2

Աւետիսեան Օնիկ, *Փոքր մը հայ տպագրական տառերու բարեփոխութեան եւ արդիականացման: Գահիրէ, տպ. Նուպար*, 1946, *մեծ* 8⁰, *էջ* 142: (O. Avédissian, 4, Rue Sérapis, Héliopolis, Egypte.) [3

Գալայեան Ե., *Անդին (Քերթուածներ): Գահիրէ, տպ. Նոր Ասող*, 1946, 8⁰, *էջ* 30: [4

Գոյամարտ Օրացոյց: Ժ. տարի 1939. *Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Պատանեկան Միութեան: Փարիզ, տպ. Ճարեան*: [5

© National Library of Armenia